600.0222.20.06.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հունիսի 2019 թվականի №222Լ
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 6-Ի N26Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018 թվականի փետրվարի 6-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի պաշտոնատար անձանց և ստորաբաժանումներին սպասարկող ծառայողական ավտոմեքենաների և դրանց շահագործման համար անհրաժեշտ վառելիքի սահմանաքանակները սահմանելու մասին» N26Լ որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումներն ու փոփոխությունը.

1) Որոշման վերնագրում և առաջին կետում «վառելիքի» բառից հետո լրացնել «տարեկան առավելագույն» բառերը:

2) Որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1 կետով.

«1.1 Սահմանել, որ՝

1) վառելիքի փաստացի ծախսի և սույն որոշման 1-ին կետով հաստատված վառելիքի տարեկան առավելագույն սահմանաքանակի համադրման նպատակով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) տնտեսական բաժինը մինչև յուրաքանչյուր ամսվա 5-րդ աշխատանքային օրը, իսկ հունվար ամսին՝ մինչև 2-րդ աշխատանքային օրը, հաշվապահական հաշվառման և

սոցիալական ծրագրերի իրականացման բաժին է ներակայացնում նախորդ ամսվա մարդատար ավտոմեքենաների երթուղային թերթիկները, որոնց հիման վրա յուրաքանչյուր տարի՝ մինչև այդ տարվա երրորդ աշխատանքային օրը, բաժնի կողմից կատարվում է նախորդ տարվա վառելիքի փաստացի ծախսի և սույն որոշման 1-ին կետով հաստատված վառելիքի տարեկան առավելագույն սահմանաքանակի համադրում՝ տարեկան (հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանկահատված) արդյունքներով.

2) եթե սույն կետի 1-ին ենթակետի համաձայն կատարված համադրմամբ պարզվում է, որ ավտոմեքենայի վառելիքի փաստացի ծախսը պակաս է սույն որոշման 1-ին կետով հաստատված վառելիքի տարեկան առավելագույն սահմանաքանակից, ապա համապատասխան ծառայողական ավտոմեքենայի շահագործման համար պատասխանատու անձին նախորդ տարվա ընթացքում ավել հատկացված վառելիքի քանակը նվազեցվում է ընթացիկ տարվա առաջին ամսվա (իսկ այդ քանակի անբավարար լինելու դեպքում՝ նաև հաջորդ ամսվա) համար տրամադրման ենթակա քանակից.

3) ծառայողական ավտոմեքենայի շահագործման համար պատասխանատու անձի աշխատանքից ազատվելու դեպքում վառելիքի փաստացի ծախսի և սույն որոշման հավելվածով հաստատված վառելիքի տարեկան առավելագույն սահմանաքանակի համադրումը կատարվում է համամասնորեն՝ աշխատանքից ազատվելու օրվա դրությամբ: Համադրման արդյունքում ավելացած վառելիքի կտրոնները վերադարձվում են:»:

3) Որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. 2019 թվականի համար Որոշմամբ հաստատված վառելիքի տարեկան առավելագույն սահմանաքանակը հաշվարկվում է 2019 թվականի հուլիսի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հուլիսի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ — **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք.Երևան
20 հունիսի 2019թ.